

Հասցե. ՀՀ, ք. Գավառ, Դաշտոյան 1-ին նրբանցք, տուն 16  
Հեռ. (0264) 2-11-57, բջջ. (077) 76 46 41  
Web: [www.blejan.org](http://www.blejan.org)

Address.RA, Gegharkunik marz, Gavar, Dashtoyan st.1/16  
Tel.: +374 264 2 11 57, mob: +374 77 76 46 41  
E-mail: [info@blejan.org](mailto:info@blejan.org) [blejanli@gmail.com](mailto:blejanli@gmail.com)

ԲԼ-Գ-009

09.09.2020

Սևանի իշխանի պաշարների  
վերականգնման և  
ձկնաբուծության զարգացման  
հիմնադրամի գործադիր տնօրեն  
Վարդան Մամիկոնյանին

Հարգելի պարոն Մամիկոնյան

Արդեն մի քանի տարի է Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման ծրագրի շրջանակներում Սևանա լճում գործում են ցանցավանդակային ձկնային տնտեսություններ: Հիմք ընդունելով ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագրի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը, որպես պատասխանատու մարմին՝ խնդրում եմ տրամադրել պաշտոնական տեղեկատվություն ծրագրերի իրականացման ընթացքի մասին, այն է.

- ✓ Քանի ցանցավանդակ է այս պահին տեղադրված Սևանա լճում
- ✓ Լճի որ հատվածներում են տեղադրված ցանցավանդակները (Սևանա լճի քարտեզի վրա խնդրում եմ նշել ցանցավանդակների տեղադիրքը, համայնքները)
- ✓ Ինչ տրամագիծ ունեն ցանցավանդակները
- ✓ Ինչքան ձուկ է այս պահին առկա ցանցավանդակներում (նշել ձկան տեսակը, տարիքը, քաշը, յուրաքանչյուր ցանցավանդակում ձկների թիվը)
- ✓ Ինչ կեր է օգտագործվում ձկների համար
- ✓ Ինչ քանակությամբ ձուկ է բաց թողնվել լիճ՝ վերոնշյալ գործունեության արդյունքում և վերջին տարիների ընթացքում(մինչ օրս), նշելով ամեն տարվա տվյալներն առանձին-առանձին, և թե որ հատվածներում է բաց թողնվել
- ✓ Մոնիտորինգի տվյալներ մի քանի տարի առաջ գետերում բաց թողնված մանրաձկան մասին(եթե առկա է)
- ✓ Ցանցավանդակային տնտեսությունների գոտում լճի էկոլոգիական որակի մոնիթորինգի տվյալները՝ ներառյալ
  - ինդիկատորային ցուցանիշների մոնիթորինգը,
  - Ջրի և հատակային նստվածքների համալիր մոնիթորինգը,

- ԼՃԻ ամբողջ մակերոյթային շերտի արբանյակային մոնիթորինգ:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան է տրվում այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30օրյա ժամկետ): Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու մեր հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում: Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող ենք ուղղել հարցումը:

Կանխավ շնորհակալ եմ:

Հարգանքով



ՀԿ նախագահ՝

Լիաննա Ասոյան



№ 04/09 սս՝ « 17 » 09 2020թ.

«ԲԼԵՋԱՆ» Բնապահպանության սոցիալական,  
բիզնեսի աջակցության ՀԿ նախագահ  
Լիաննա Ասոյանին

Հարգելի՛ տիկին Ասոյան,

Ի պատասխան Ձեր 09.09.2020 ԲԼ-Գ-009 գրության հայտնում ենք, որ այս պահի դրությամբ Սևանա լճում գործում է 2 ցանցավանդակային տնտեսություն՝ մեկը Շորժա, մյուսը՝ Լճափ համայնքներին հարակից հատվածներում:

Շորժա համայնքի հարակից հատվածում առկա ցանցավանդակային տնտեսությունում այս պահին առկա է 2 ցանցավանդակ, յուրաքանչյուրը 12 մ տրամագծով, 8 մ խորությամբ և տնտեսությունը գործելու է մինչև 2021 թ-ի հուլիս ամիսը: Դրանում առկա է ընդամենը 3 տոննա գեղարքունի և ամառային իշխան:

Լճափ համայնքի հարևանությամբ գործող ցանցավանդակային տնտեսությունում առկա է 12 ցանցավանդակ՝ յուրաքանչյուր ցանցավանդակի տրամագիծը 25 մ, խորությունը՝ 18 մ: 12 ցանցավանդակներից մեկն այս պահի դրությամբ դատարկ է, 6-ում պահվում են Սևանի իշխանի «Ոսկե ֆոնդ» հանդիսացող երկու ենթատեսակների՝ 4 սերունդ ներկայացնող գեղարքունու և 2 սերունդ ներկայացնող ամառային իշխանի մայրական կազմը: Երկու ցանցավանդակում պահվում են մանրածուկ, որոնցից հետագայում կառանձնացվեն ծնողական կազմին փոխարինող և ապրանքային ձկնապաշարները: Մեկական ցանցավանդակում պահվում են ամառային իշխանի և գեղարքունու Սևանա լիճ բացթողնման ենթակա մանրաձկներ՝ յուրաքանչյուր ցանցավանդակում շուրջ 100.000-ական հատ: Ընդ որում ներկա պահին գեղարքունու միջին քաշը մոտ 150 գրամ է, իսկ ամառային իշխանի միջին քաշը՝ մոտ 100 գրամ: Այս խմբաքանակները նախատեսվում է աղապտացնել բնական կերին և բաց թողնել Սևանա լիճ մոտ ժամանակներում՝ ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության հետ համատեղ մշակված միջոցառումների շրջանակներում: Մեկ ցանցավանդակում պահվում է ապրանքային ձուկ: Հարկ է նշել, որ ծնողական կազմի խմբաքանակները ևս երկու սերունդ տալուց հետո վերածվում են ապրանքային ձկան:

Այս պահի դրությամբ Սևանա լճում տեղադրված ցանցավանդակներում պահվում է ընդամենը 220-230 տոննա բացառապես Սևանի իշխանի նշված երկու ենթատեսակը: Ցանցավանդակային տնտեսության գործունեության ողջ ընթացքում հիմնականում կիրառվել է Եվրոպական առաջատար կազմակերպությունների (Alltech Coppens, Aller Aqua) արտադրած բաձրորակ կերեր (SUPREME-21, COFIT, Nutra MP-T, Pregrower-18, ASTAIX22, REPRO, Aller Bronze, Aller Silver): Փորձարկվել է նաև տեղական արտադրության ձկան կեր, որը սակայն վատ է յուրացվել Սևանի իշխանի կողմից:

2015-2020 թվականների ընթացքում Սևանա լիճ կամ դրա ավազանին պատկանող և Սևանի իշխանի հիմնական ձվադրավայր հանդիսացող գետեր՝ Կարճաղբյուր, Լիճք, Մասրիկ, Ծակքար և Արգիճի, բաց է թողնվել Սևանի իշխանի ամառային և գեղարքունի ենթատեսակների 3,040,582 (երեք միլիոն քառասուն հազար հինգ հարյուր ութսուներկու) հատ մանրածուկ (Աղ.1):

Աղյուսակ 1

2015-2020 թվականների ընթացքում Սևանա լճի ավազան բաց թողված մանրածկների քանակը

Թվական	Ժամանակահատված	Բացթողման վայր (լիճ/գետ)	Չկնատեսակ	Մանրածկան քանակ (հատ/ առանձնյակ)	Չկան քաշ (գ)
2015	23.06.2015	Չկնագետ գետի գետաբերան	Գեղարքունի	40,000	30
	23.06.2015	Սևանա լիճ	Գեղարքունի	3500	50
	10.07.2015	Կարճաղբյուր գետի գետաբերան	Գեղարքունի	105,280	2.5
				30,313	37.0
	15.07.2015	Կարճաղբյուր գետի գետաբերան	Գեղարքունի	50,000	2.5
			9687	37.0	
<b>Ընդամենը</b>			Գեղարքունի	<b>238,780</b>	
2016	07.06.2016	Կարճաղբյուր գետի միջին հոսանք	Գեղարքունի	201,500	0.7
	20.06.2016	Կարճաղբյուր գետի ստորին հոսանք	Գեղարքունի	60,461	0.65
	20.06.2016	Լիճք գետի միջին հոսանք	Գեղարքունի	160,615	0.65
	11.07.2016	Ծակքար և Բախտակ գետերի	Ամառային իշխան	157,200	0.07

		միախառնման հատված			
	11.07.2016	Արգիճի գետի միջին հոսանք	Ամառային իշխան	125,700	0.07
	16.09.2016	Մասրիկ գետի ստորին հոսանք	Ամառային իշխան	215,217	0.23
<b>Ընդամենը</b>			<b>Գեղարքունի/ Ամառային իշխան</b>	<b>422,576 / 498,117 (920,693)</b>	
2017	Ապրիլ	Սևանա լիճ	Գեղարքունի	864,000	15-18
			Գեղարքունի	216,000	240-320
			Գեղարքունի	46,000	750-890
<b>Ընդամենը</b>			<b>Գեղարքունի</b>	<b>1,126,000</b>	
2018	25.05.2018	Կարճաղբյուր գետի գետաբերան	Գեղարքունի	20,000	0.64
	25.05.2018	Մասրիկ գետի գետաբերան	Գեղարքունի	40,000	0.64
	16.10.2018	Ծակքար և Բախտակ գետերի միախառնման հատված	Ամառային իշխան	30,458	1.2
<b>Ընդամենը</b>			<b>Գեղարքունի / Ամառային իշխան</b>	<b>60,000 / 30,458 (90,458)</b>	
2019	19.11.2019	Մասրիկ գետի գետաբերան	Ամառային իշխան	10,971	22.78
	19.11.2019	Կարճաղբյուր գետի ստորին հոսանք	Գեղարքունի	39,988	3.50
	26.11.2019	Մասրիկ գետի գետաբերան	Ամառային իշխան	11,225	21.5
	26.11.2019		Գեղարքունի	10,034	45.16
<b>Ընդամենը</b>			<b>Գեղարքունի / Ամառային իշխան</b>	<b>50,022 / 22,196 (72,218)</b>	
	17.07.2020	Կարճաղբյուր գետի ստորին հոսանք	Գեղարքունի	126,048	1.64
	17.07.2020		Գեղարքունի*	62,586	3.0

2020		Մասրիկ գետի ստորին հոսանք	Գեղարքունի	114,654	1.64
	01.09.2020	Կարճադրյուր գետի գետաբերան	Գեղարքունի	75,811	5.30
	01.09.2020	Մասրիկ գետի ստորին հոսանք	Գեղարքունի	213,334	5.30
Ընդամենը			Գեղարքունի	592,433	
ԱՄՓՈՓ			Գեղարքունի / Ամառային իշխան	2,489,811 / 550,771 (3,040,582)	

Վերոնշյալ աշխատանքներն իրականացվել են Հիմնադրամի առաջարկությամբ և ՀՀ բնապահպանության նախարարի 06.06.2016թ-ին N 138-Ա հրամանով ստեղծված մասնագիտացված աշխատանքային խմբի անմիջական մասնակցությամբ:

Մանրաձկների բացթողման գործընթացին հաջորդել է մշտադիտարկումը, որը իրականացվել է յուրաքանչյուր ամիս: Այդ ընթացքում ուսումնասիրվել է բաց թողնված մանրաձկների կենսաբանական, էկոլոգիական առանձնահատկությունները, ինչպես նաև գնահատվել է նրանց կենսամիջավայրի վիճակը և միզբացիոն գործընթացները՝ միտված բաց թողնված մանրաձկների կենսունակության արդյունավետության բացահայտմանը: Սակայն մինչ այժմ առկա չեն դեռևս հստակ տվյալներ բաց թողնված ձկների որսավերադարձի վերաբերյալ:

Հիմնադրամը համալիր ծրագրով նախատեսված մանրաձկներ բաց թողնելուց բացի, Սևանի իշխանի բնական պոպուլյացիայի վերականգնման առավել արդյունավետ մեթոդ ընտրելու և կիրառելու նպատակով կատարել է որոշ փորձնական գիտահետազոտական աշխատանքներ: 2016թ. հուլիսին և 2017թ. հունվարին Հիմնադրամի կողմից Լիճք գետի ակունքում հատուկ ինկուբատոր (գերմանական) արկղերով տեղադրվել է Սևանի իշխանի «աչքի» փուլում գտնվող 8125 հատ ձկնկիթ, որից 4500 հատը ամառային, իսկ 3625-ը՝ գեղարքունի ենթատեսակի: Այս մեթոդով աչքի փուլից մինչև թրթուր՝ ամառային իշխանի մոտ արդյունավետությունը կազմել է 92.75%, իսկ գեղարքունի ենթատեսակինը՝ 86.5%: Հարկ է նշել, որ վերոնշյալ աշխատանքների կատարման համար հիմք են հանդիսացել Հիմնադրամի կողմից տեղական և միջազգային փորձի մանրակրկիտ ուսումնասիրությունը և լավագույն մեթոդների տեղայնացումը:

2015 թվականին Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից որոշում է կայացվել Համալիր ծրագրով նախատեսված մշտադիտարկման աշխատանքները, ինչպես նաև Սևանա լճի էկոլոգիական վիճակի գնահատումը իրականացնել

տեղական ինստիտուցիոնալ կառույցների կողմից: Այս նպատակով ստեղծվել է մասնագիտացված կազմակերպություններից բաղկացած անկախ գիտական մոնիթորինգի խորհուրդ, որն իր մեջ ներառում է հետևյալ ինստիտուցիոնալ կառույցները՝ ՀՀ ԲՆ «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը, «Սևան» ազգային պարկ ՊՈԱԿ-ը, ՀՀ ԳԱԱ «Կենդանաբանության և Հիդրոէկոլոգիայի» գիտական կենտրոնը և «Էկոլոգանոսֆերային հետազոտությունների» կենտրոնը:

Հիմնադրամի կողմից մշակվել, իսկ մոնիթորինգի խորհրդի կողմից հավանության է արժանացել 2016-2018 թթ. մոնիթորինգի իրականացման աշխատանքային եռամյա ծրագիրը:

Մոնիթորինգի խորհուրդը համակարգել և հանդիսացել է հիմնական պատասխանատուն վերոնշյալ աշխատանքների կատարման համար:

Եռամյա ծրագրի արդյունքում Հիմնադրամին ներկայացվել են վերլուծություններ, հաշվետվություններ և եզրակացություններ հետևյալ աշխատանքների վերաբերյալ՝

- Սևանա լճի ներկայիս էկոլոգիական վիճակի գնահատման, կանխատեսումների և հնարավոր սցենարների մասին հաշվետվությունների պատրաստում, այդ թվում՝
- ✓ Տվյալների վերահսկման և որակի ապահովման հաշվետվության պատրաստում (QAPrP),
- ✓ ՄԳԸ (SOP) մշակում, հաշվետվության պատրաստում,
- ✓ ԱՏՀ, թեմատիկ քարտեզների պատրաստում,
- ✓ Դաշտային և լաբորատոր հետազոտությունների հաշվետվությունների պատրաստում,
- ✓ Սևանա լճի էկոհամակարգի վրա ջրահավաքի (աղտոտման կետային աղբյուրներ) ազդեցության հետազոտության հաշվետվության պատրաստում,
- Շրջակա միջավայրի վրա ցանցավանդակային ձկնաբուծության ազդեցության ուսումնասիրության (EIS) և ազդեցության գնահատման (EIA) հաշվետվության պատրաստում,
- Ցանցավանդակային ձկնաբուծության էկոլոգիական ռիսկերի գնահատում, հաշվետվության պատրաստում,
- Լճի ասիմիլացիոն պոտենցիալի գնահատման (ըստ Ֆոսֆորի, ազոտի և ածխածնի) հաշվետվության պատրաստում,
- Առաջարկություններ՝ լճի ջրավազանում իշխանի աճեցման համար ցանցավանդակների տեսակների, չափերի, քանակների և տեղաբաշխման վերաբերյալ,

- Շրջակա միջավայրի և կենսաբազմազանության կառավարման պլանի մշակում (EBMP): Այդ թվում Սևանա լճի էկոհամակարգի վրա ցանցային ձկնաբուծության ազդեցության նվազեցմանը ուղղված միջոցառումների մշակում, ինչպես նաև ցանցավանդակային ձկնաբուծության հնարավոր առավելագույն ծավալների աճեցման (ավազանի տրոֆիկ կարգավիճակի պահպանմամբ) վերաբերյալ հաշվարկներ և եզրահանգումներ,
- Լճի էկոհամակարգի վրա համալիր ծրագրի ընթացիկ ազդեցության մշտադիտարկում,
- Ցանցավանդակային տնտեսությունների կողմից արտանետումների սահմանային քանակի վերաբերյալ առաջարկությունների պատրաստում,
- «Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման» հիմնադրամի կողմից ֆինանսավորվող բնապահպանական միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,
- Սևանի ձկնապաշարների վերականգնմանը ուղղված առաջարկությունների պատրաստում,
- Համալիր ծրագրի խնդիրներից բխող այլ գործառնությունների իրականացում:

Տեղեկացնում ենք նաև, որ վերոնշյալ աշխատանքների կատարման արդյունքում ստացված հաշվետվությունները կազմում են հազարավոր էջեր, որոնք անհնար է կից գրությամբ ներկայացնելու համար: Սակայն անհրաժեշտության դեպքում կարող եք դիմել Հիմնադրամի մասնագետներին և ծանոթանալ բոլոր վերոնշյալ հաշվետվություններին:

Հարգանքով՝  
Գործադիր տնօրեն



Վարդան Մամիկոնյան

Կատարող՝ Հիմնադրամի ձկնաբան Անուշ Արարեյան

Հեռ.՝ +374 11 202-860 (108)

Բջջ.՝ +374 96 02 11 91